Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
ապրիլի 18-ի N 530 - Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 22-ի N 1851-Ն որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«___» _____20___թ.
_____
(փաստաթուղթը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը (թվերով և բառերով)

Գնորդ՝

Ֆիզիկական անձ

անուն_____

ազգանուն_____

հաշվառման հասցե_____

անձնագրի /նույնականացման քարտի/ տվյալներ _____
(սերիա, համար, երբ և ում կողմից է տրվել)

Վաճառող՝

Ֆիզիկական անձ

անուն_____

ազգանուն_____

հաշվառման հասցե_____

անձնագրի /նույնականացման քարտի/ տվյալներ _____
(սերիա, համար, երբ և ում կողմից է տրվել)

Սույն պայմանագրով վաճառողը պարտավորվում է գնորդին սեփականության իրավունքով փոխանցել սույն պայմանագրում նշված անշարժ գույքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ անշարժ գույքը և վճարել դրա համար սույն պայմանագրով սահմանված գինը:

Պայմանագրի առարկան.

□ հողամաս_____հա (չի լրացվում, եթե պայմանագրի առարկա շենք, շինությունը գտնվում է բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերում)

□ շենք, շինություններ_____

ընդհանուր մակերեսի չափը կամ մակերեսների չափերը՝ ըստ առանձին շենք, շինությունների

Հասցե _____

Շենք, շինությունը բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի բնակարան և (կամ) ոչ բնակելի տարածք հանդիսանալու դեպքում գնորդին սեփականության իրավունքով փոխանցվում է նաև բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ վաճառողին սեփականության իրավունքով պատկանող համապատասխան բաժնեմասը:

Վաճառողը երաշխավորում է, որ սույն պայմանագրով նախատեսված անշարժ գույքի սեփականատերն է, գույքը վաճառված կամ դատական վեճի առարկա չէ, գույքը վաճառելու սահմանափակում առկա չէ:

Վաճառողը երաշխավորում է նաև, որ՝

□ սույն պայմանագրով նախատեսված անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ.

□ գնորդը տեղեկացված է սույն պայմանագրով նախատեսված անշարժ գույքի՝ այլ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու մասին.

□ սույն պայմանագրով վաճառողը գնորդի սեփականությանն է հանձնում Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրված _____ թ. N _____ գրանցման վկայականի համաձայն վաճառողի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը ամբողջությամբ:

Անշարժ գույքի նշանակությունը՝

□ բնակելի

□ հողամաս

□ այլ անշարժ գույքի _____

Գինը

Սույն պայմանագրով նախատեսված անշարժ գույքի գինը կազմում է _____ դրամ:
(թվերով և բառերով)

Կողմերը տեղեկացված են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանած հարկային պարտավորությունների, հարկային պարտավորությունների գանձման կարգի ու ժամկետների, ինչպես նաև հարկային արտոնությունների մասին, եթե կիրառելի է:

Սույն պայմանագրով նախատեսված անշարժ գույքի գինը՝

□ վճարվել է ամբողջությամբ.

□ վճարվելու է _____ օրվա ընթացքում:

Անշարժ գույքը գնորդին հանձնելը՝

□ անշարժ գույքի հանձնման ակտը պետք է կազմվի սույն պայմանագիրը հաստատելուց հետո _____ընթացքում.

□ անշարժ գույքը սույն պայմանագիրը հաստատելու պահին հանձնվել է գնորդին:

Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է պայմանագրի կնքման պահին գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

□ **Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ**

_____

(կարող են լրացվել միայն գրանցման վկայականի «Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ» բաժնում գրառված տեղեկությունները)

_____ (լրացվում է ըստ անհրաժեշտության):

Էլեկտրոնային թվային ստորագրություններ՝

Գնորդ Էլեկտրոնային թվային ստորագրություն

Վաճառող Էլեկտրոնային թվային ստորագրություն

□ Սույնով հաստատում եմ, որ առկա չէ պայմանագրի առարկա անշարժ գույքի համատեղ սեփականության մասնակից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի իմաստով), որի վերաբերյալ տվյալները առկա չեն պայմանագրի առարկա անշարժ գույքի միավորի վերաբերյալ N_____ միասնական տեղեկանքում:
միասնական տեղեկանքի համարը

Սույն պայմանագիրը կողմերը ստորագրել են էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի «Անձնական գրասենյակ» բաժնում՝ «Ես եմ» ազգային նույնականացման հարթակի միջոցով մուտք գործելով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ